ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N _____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Իսրայելյան փողոցից մինչև Հրազդանի կիրճ ընկած հատվածը /Ս. Փարաջանովի թանգարանի հարակից փողոց/ անվանակոչել Սերգեյ Փարաջանովի փողոց։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԽՍՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր, սցենարիստ Սերգեյ Փարաջանովը ծնվել է 1924թ. հունվարի 9-ին Թբիլիսիում: 1932-1942թթ. սովորել է Թբիլիսիի թիվ 42 միջնակարգ դպրոցում, 1942-1945թթ.՝ Թբիլիսիի կոնսերվատորիային կից երաժշտական ուսումնարանի ջութակի և վոկալի բաժիններում: Միաժամանակ պարի դասեր է վերցրել Օպերային թատրոնին կից պարարվեստի ուսումնարանում:

1951թ. ավարտել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը՝ Ի. Սավչենկոյի արվեստանոցը: Մասնակցել է Ի. Սավչենկոյի «Երրորդ հարվածը» (1948թ.) և «Տարաս Շևչենկո» (1952թ.) ֆիլմերի ստեղծմանը:

1951թ., որպես ռեժիսորի ասիստենտ, աշխատել է Կիևի կինոստուդիայում, որտեղ 1954թ. նկարահանել է իր անդրանիկ լիամետրաժ «Անդրիեշ» կինոնկարը (Յ. Բազելյանի հետ), ապա՝ «Առաջին տղան» (1958թ.), «Ուկրաինական ռապսոդիա» (1961թ.), «Ծաղիկը քարի վրա» (1962թ.):

1964թ. նկարահանել է «Մոռացված նախնիների ստվերներ» կինոնկարը: Ֆիլմն արժանացել է Կիևի համամիութենական, Մար դել Պլատայի կինոփառատոների մրցանակների, Սալոնիկի կինոփառատոնի ոսկե մեդալի, Բրիտանական կինոակադեմիայի և այլ մրցանակների:

1969թ. «Հայֆիլմ»-ում նկարահանած «Նռան գույնը» կինոնկարը հաստատել է կինոռեժիսորի արվեստի յուրօրինակությունը և մեծ համբավ բերել նրան (ՀՀ Պետական մրցանակ՝ 1988թ.):

Սերգեյ Փարաջանովը ստեղծել է նաև մի շարք կարճամետրաժ ֆիլմեր՝ «Նատալյա Ուժվի», «Ոսկե ձեռքեր» (երկուսն էլ՝ 1957թ.), «Հակոբ Հովնաթանյան» (1968թ.), «Փիրոսմանի» (1985թ.) և այլն:

Երկար տարիներ բնակվել է Թբիլիսիում: 1980-ական թվականներին նկարահանել է «Սուրամի ամրոցի լեգենդը» (1984թ.), «Աշուղ Ղարիբը» (1988թ., Մոսկվայի «Նիկա» մրցանակ՝ 1991թ.) ֆիլմերը:

Նրա գեղանկարչական գործերի անհատական ցուցահանդեսներ են բացվել Թբիլիսիում (1985թ.), Երևանում (1988թ., 1990թ.), Փարիզում (2007թ.): Կյանքի վերջին տարիներին նկարահանել է ինքնակենսագրական «Խոստովանանք» ֆիլմը, որն անավարտ է մնացել: 1990թ. արժանացել է Ուկրաինայի Պետական մրցանակի, Հայաստանի և Ուկրաինայի ժողովրդական արտիստի կոչումներին:

Սերգեյ Փարաջանովը մահացել է 1990թ. Երևանում, թաղված է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում: 1991թ. Երևանում գործում է կինոռեժիսորի թանգարանը, նրա կիսանդրին տեղադրված է Կիևի կինոստուդիայի տարածքում (1997թ., բրոնզ), մահարձանը՝ Երևանում (1999թ.՝ բրոնզ, գրանիտ):

Սերգեյ Փարաջանովի անունն է կրում 1969թ. հայտնաբերված (3963) աստերոիդը: 2010թ. Հոլիվուդում ստեղծվել է «Փարաջանով-Վարդանով» ինստիտուտը՝ վարպետների ստեղծագործությունները ուսումնասիրելու նպատակով:

Սերգեյ Փարաջանովի անվամբ Երևան քաղաքում փողոց անվանակոչելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Ս. Փարաջանովի թանգարանի տնօրեն Զ. Սարգսյանի կողմից։

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերգեյ Փարաջանովի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Սերգեյ Փարաջանովի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ